թէպէտ և Հայք ջանացին միշտ հաստատուն պահել զվաղէմի բարեկամութիւնս իւրեանց, եւ բազում անգամ 'ի կարեւոր իրս և 'ի դէպս ձեռնտու և օգնական եղեն նոցա մուտացեալ զնեղութիւնս իւրեանց. բայց նոքա վաղ ընդ փոյթ մուռանային զնոսա, եւ բազում անգամ խօսեցան ընդ Ֆրա Մանուէլ Փոխանորդի նոցին և եդին պայմանս. բայց միարանք Ծննդեան անլսող լեալ բանից նորին, ոչ ընկալան, և պնդէին պատարագել Հայոց զկնի Լատինաց. և եղեւ 'ի բազմանալ վիճմանց՝ հարկ եղեւ գնալ յերկուց կողմանց 'ի Բեթղեհէմ և կարգաւորել զխնդիրն, որ եւ Ցոյնք յանձն առին կէս ժամ յառաջ կանխել, և որոշեցաւ խնդիրն պայմանագրով՝ 'ի վնաս Հայոց։

Թէոդորոս Պատրիարք ետ գրել զհամառօտութիւն պատմութեան անցից Ս. Տեղեաց, և առաքել առ Եփրեմ Կաթուղիկոս 'ի Ս. Էջմիածին գիտութեամբ Ամիրայից ոմանց. զի եթէ արժան դատեսցէ, տացէ թարգմանել զայն 'ի Ռուս բարբառ, առաքել 'ի պատշաճաւոր տեղիս, իմանալ թէ Հայք ոչ ինչ առին 'ի ձեռաց Ցունաց, այլ քրիստոնէաբար հաւասար եղեն 'ի բաժանորդ տեղիս, (1813. 'ի 29 Դեկտեմբերի)։

Զկնի տիրելոյ Հայոց հիւսիսային մասին եկեղեցւոյն Բեթղեհէմի՝ բաց յայլոց կարեւոր իրաց արժան էր առ ժամն կանգնել խաչկալս երկուց խորանաց, կազմել դարանս և պահարանս 'ի պահպանութիւն եկեղեցական զարդուց, որպէս հրաման տուեալ էին յառաջագոյն Դատաւորք. այլ յորժամ պատրաստեալ զպահարանն եդին 'ի կողմն յարեւմտից 'ի կամարաձեւ յորմն, 'ի տեղի նախկին դրան եկեղեցւոյ, զայն տեսեալ Ցունաց դիմեցին առ Դատաւորն, թէ Հայք առանց հրամանի չինեցին սենեակ յեկեղեցւոջ անդ։ Եւ նորա կոչեալ զՀայս խօսի ընդ նոսա կշտամբանօք, և ստիպէ փութանակի բառնալ զայն անտի և փակել զտեղին՝ երկուցեալ 'ի բնակչաց երկրին և 'ի մեծամեծաց Տէրութեան. թէպէտ Հայք ասէին թէ ոչ է այն սենեակ՝ այլ պահարան սակս եկեղեցական զարդուց, և առաքել զմի ոք յիւրոց և իմանալ զատոյգն, և տակաւին փեղկք նորա ոչ էին ագուցեալ, և այլ բազմադիմի բանք. այլ նա ոչ ինչ անսայր բանից նոցա, զնոյն ասէր